

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ապրիլի 3-ին, կիրակի.—Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Լուսաբեր հրեշտակների ավետիսով ողողված խուռներամ բազմությունը փութացել էր Մայր տաճար՝ ներկա գտնվելու Փրկչի հրաշափառ Հարության տոնին մատուցվող հանդիսավոր սուրբ պատարագին:

Զմեռային ցրտաշունչ օրերին փոխարինում է պայծառ ու արևոտ, ամենուրեք տիրող գարնանային աշխուժությունը:

Զատկական սուրբ պատարագը մատուցում է Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը:

Սուրբ պատարագի արարողությունը մեծ ոգևորությամբ կատարում է Մայր տաճարի երգչախումբը:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար:

Սուրբ պատարագին ներկա են Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը, Նախարարների խորհրդի նախագահ Հրանտ Բագրատյանը, արտաքին գործոց նախարար Վահան Փափազյանը, Ամերիկայի, Ֆրանսիայի և այլ երկրների դեսպաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ և ուխտավորաբար Մայր Հայրենիքում գտնվող ափյուռքահայեր:

Պատարագի սրբազան արարողությունը Երևանի հեռուստատեսությամբ, ուղիղ եթերով, ափռվում է մեր հանրապետության ողջ տարածքում:

«Հայր մեր»-ից առաջ, Սուրբ Զատկի առիթով, Վեհափառ Հայրապետը կրոնաշունչ և հայրենաբույր քարոզ խոսեց, որը մեծ ոգևորությամբ ընդունվեց հավատացյալների կողմից (տես էջ 5):

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և հիշյալ հյուրերով շրջապատված առաջնորդվում է Վեհարան՝ ճանապարհին օրհնելով հավատացյալների բազմությունը:

Հանուն Մայր Աթոռի միաբանության, ներկա հյուրերի և ողջ հավատացյալների, Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը շնորհավորում է Ամենայն Հայոց Հայրապետի Սուրբ Զատիկը, ցանկանում նրան քաջառողջություն, արևշատություն՝ ի փառս Հայ Եկեղեցու պայծառության:

Ապա օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը, շնորհավորում համայն հայության Սուրբ Զատիկը և ցանկանում վիրավոր Արցախին խաղաղ, բարգավաճ և երջանիկ օրեր:

Օրվա հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով: